Foothill SELPA

**Foothill Special Education Local Plan Area**

223 N. Jackson Street

Glendale, CA 91206

(818) 246-5378   *  Fax:  (818) 246-3537

## Ծանուցում՝ ծնողի /խնամակալի /փոխարինողի ընթացակարգարգերի երաշխիք

## Ծնողների և երեխաների Հատուկ կրթության իրավունքները՝ ըստ

## Անկարողություններ ունեցող կրթության օրենքի (IDEA), B բաժնի

**Հարգելի ծնող(ներ) /խնամակալ(ներ) /աշակերտ,**

Այս տեղեկությունը տրամադրվում է ձեզ, որովհետև ձեր երեխան նկատի է առնվել Հատուկ կրթության ծրագրում հնարավոր տեղավորման համար կամ ներկայում արձանագրված է Հատուկ կրթության ծրագրում և ծառայություններ է ստանում : Այս տեղեկությունը տրամադրվում է նաև 18 տարեկաններին, ովքեր իրավասու են ծառայություններ ստանալու: Եթե ձեր երեխան ուղղորդվում է Հատուկ կրթության ծառայությունների, երբ ընդհանուր կրթության ծրագրի բոլոր տարբերակները դիտարկվել են և համապատասխանորեն կիրառվել նրա համար, ապա անհրաժեշտության դեպքում դուք իրավունք ունեք հատուկ կրթության ուղղորդում ձեռնարկել ձեր երեխայի համար:

Կալիֆորնիայում հատուկ կրթություն է տրվում անկարողություններ ունեցող՝ նորածինից մինչև քսաներկու (22-րդ տարեդարձը )տարեկան աշակերտների համար: Դաշնային և նահանգային օրենքները պաշտպանում են ձեզ և ձեր երեխային, հատուկ կրթության կարիքի բացահայտման, գնահատման ընթացակարգերի, տեղավորման և ծառայությունների որոշման գործընթացում: Անկարողություններ ունեցող երեխաների ծնողները իրավունք ունեն մասնակցել անհատականացված ուսումնական ծրագրի (IEP) ընթացքին, տեղեկություններ ստանալ IEP-ի զարգացման և անվճար հանրային կրթության և առկա բոլոր այլընտրանքային ծրագրերի՝ ներառյալ հանրային և ոչ հանրային ծրագրերի առկայության մասին:

Այս ծանուցագրի պատճենը ուսումնական տարվա ընթացքում միայն մեկ անգամ կտրվի ձեզ: Օրինակը պետք է նաև ձեզ տրվի՝ (1) երբ նախնական ուղղորդման կամ գնահատման պահանջ հանձնարարվի. (2) երբ ձեր երեխայի վերագնահատման ժամանակն է. 3) երբ նահանգային բողոքի ընթացիկ գործընթացի կամ առաջին ուսումնական տարում բողոքարկում է պահանջվում. 4) երբ որոշում է կայացվում կարգապահության պատճառով տեղավորման փոփոխություն կատարել կամ (5) դա ձեր խնդրանքն է: Դուք իրավունք ունեք այս տեղեկությունը ստանալ ձեր մայրենի կամ հիմնական լեզվով, կամ հաղորդակցության այլ եղանակով, եթե իհարկե դա անհնար չէ: Այս

տեղեկությունը կարող է նաև բանավոր թարգմանվել, եթե ձեր հիմնական/մայրենի լեզուն կամ հաղորդակցության այլ ձևը գրավոր լեզու չէ: Եթե առկա է, այս ընթացակարգերի երաշխիքների պատճենը կարող է նաև հասանելի լինել ձեր կրթաշրջանի կայքէջում և կարելի է նաև ուղարկել ձեզ՝ ձեր խնդրանքով կամ էլեկտրոնային փոստով: Խնդրում ենք ստուգել ձեր տեղական դպրոցների կրթշրջանը՝ պարզելու, թե արդյոք այս տարբերակը մատչելի է:

Ստորև նշված սահմանումները կօգնեն ձեզ հասկանալու իրավունքի մեկնաբանությունները: Եթե դուք այս տեղեկության բովանդակության կամ լրացուցիչ տեղեկությունների կարիք ունեք, կարող եք կապ հաստատել ձեր դպրոցի կրթշրջանի հատուկ ուսուցման տնօրենի հետ, որի հեռախոսահամարը կարող եք գտնել այս փաստաթղթի վերջին էջում:

**Սահմանումներ**

**__Հատուկ կրթություն__** նշանակում է հատուկ ձևակերպված ուսուցում, որն անվճար է և բավարարում է անկարողություններ ունեցող երեխաների հատուկ կարիքները՝ դասարանում, տանը, հիվանդանոցներում և հաստատություններում, ինչպես նաև այլ պայմաններում, այն նաև իր մեջ ներառում է ֆիզիկական դաստիարակության ուսուցում:

***__Կապակցված ծառայություններ.__*** նշանակում են՝ տրանսպորտի, ուղղիչ և օժանդակիչ ծառայություններ, որոնք կարող են օգնել անկարողություններ ունեցող երեխային հատուկ կրթություն ստանալու, ներառյալեւով՝ անկարողությունների վաղ հայտնաբերումը ու գնահատումը: Կապակցված ծառայությունները կարող են ներառել.

1. Խոսքի և լեզվի պաթոլոգիայի և աուդիոլոգիայի (լսողության) ծառայություններ
2. Թարգմանչական ծառայություններ
3. Հոգեբանական ծառայություններ
4. Ֆիզիկական և աշխատանքային թերապիա
5. Հանգիստ, ներառյալ հանգիստի թերապիա:
6. Խորհրդատվական ծառայություններ, ներառյալ վերականգնողական խորհրդատվություն
7. Ծանոթացումներ և շարժողական ծառայություններ
8. Դպրոցի առողջապահական ծառայություններ և բուժքրոջ ծառայություններ
9. Բժշկական ծառայություններ միայն ախտորոշման կամ գնահատման նպատակով
10. Սոցիալական աշխատանքների ծառայություններ
11. Ծնողներին խորհրդատվություն և վերապատրաստում

***__Անկարողություններ ունեցող երեխաներ.__*** Հաշմանդամություն ունեցող անձանց որոշումը (օրենսդրական որոշում) («IDEA») սահմանում է «հաշմանդամություն ունեցող երեխաներին», ներառյալ՝ անկարողություններով երեխաներին, ովքեր ունեն լսողության խանգարումներ, ներառյալ՝ խուլերը, խոսքի կամ լեզվի, տեսողության խանգարումները, ներառյալ՝ կուրությունը, հոգեկան խանգարումները, օրթոպեդիկ խանգարումները, աուտիզմը, ուղեղի տրավմատիկ վնասվածքները, այլ առողջական խանգարումները կամ սովորելու հետ կապկցվաց հատուկ խանգարումները, որոնք ըստ այդմ կարիք ունեն հատուկ ուսուցման և համապատասխան ծառայությունների:

***__Համաձայնություն.__*** Համաձայնություն նշանակում է. 1) ծնողներին տրվել են բոլոր տեղեկությունները, մայրենի լեզվով կամ հաղորդակցության այլ եղանակով, որը վերաբերում է ցանկացած գործողությունների ընթացքի, որ համար համաձայնություն է պահանջվում. 2) ծնողները հասկանում և համաձայնում են այդ գործողությունների ընթացքին իրենց գրավոր համաձայնությամբ! Համաձայնության ձևը պարունակում է գործողությունների նկարագրությունը

և այն գրառումների ցանկը, որոնք մատչելի կլինեն գործողությունները նախաձեռնող և իրականացնող անձնավորությունների (3) ծնողները հասկանում են, որ իրենց համաձայնությունը կամավոր է, և ցանկացած ժամանակ կարող են այն չեղյալ համար, սակայն դա չի նշանակում, որ ետ վերցրած համաձայնության ժխտում է արդեն տեղի ունեցած գործողությունը:

***Գնահատում*.** Ձեր երեխայի գնահատման գործընթացի համար, օգտագործվել են տարբեր քննություններ և միջոցներ՝ ըստ Կրթական Կոդի 56320-56339 բաժինների և 20 U.S.C.- հոդվածի 1414 (ա), (բ) և (գ), որոշելու, թե արդյոք ձեր երեխան ունի անկարողություն և ձեր երեխայի ուսուցմանը նպաստելու համար անհրաժեշտ է հատուկ և հարակից ծառայություններ և որոշված չափ: Գնահատման գործիքները անհատապես ընտրվում են ձեր երեխայի համար և տնօրինվում են տեղական կրթական հաստատություններում աշխատող իրավասու մասնագետների կողմից: Քննության և գնահատման նյութեր ու ընթացակարգեր կընտրվեն և կկիրառվեն, որպեսզի չլինի ռասայական, մշակութային կամ սեռական խտրականություն: Նյութերը կամ ընթացակարգերը կտրամադրվեն և կկատարվեն ձեր երեխայի մայրենի լեզվով կամ հաղորդակցության այլ կերպով, եթե իհարկե դա հնարավոր է անել: Միայն մեկ չափանիշ չի կարող երեխայի ուսումնական կարիքների համար համապատասխան ծրագրի որոշում կայացնել:

***Անվճար համապատասխան հանրային կրթություն («FAPE»).*** Կրթություն, որը (1) տրամադրվում է հանրության ծախսերով՝ հանրային վերահսկողության և ուղղորդման ներքո և անվճար է ձեզ համար. (2) համապատասխանում է Կալիֆորնիայի կրթական բաժանմունքի չափանիշերին և (3) տրամադրվում է ձեր երեխայի համար մշակված, անհատականացված ուսումնական գրավոր ծրագիր, համապատասխան՝ նրա ուսուցմանը նպաստելու է և նախադպրոցական, տարրական կամ միջնակարգ դպրոցական ծրագրերի իրականացմանը:

***Անհատական կրթական ծրագիր («IEP»).*** Ձեր երեխայի IEP թիմի կողմից մշակված գրավոր փաստաթուղթ, որը ներառում է առնվազն հետևյալները. (1) ուսումնական նվաճումներ և ֆունկցիոնալ կատարման ներկա մակարդակ 2) տարեկան նպատակների չափելի մակարդակը 3) սահմանում՝ հատուկ ուսուցման և հարակից ծառայություններ, լրացուցիչ օժանդակ նյութեր և ծառայություններ, որը հիմնված է հետազոտության վերանայված հնարավոր հիմունքների վրա, երեխային տրամադրելու. 4) բացատրություն, թե երեխայի մասնակցության որքանով կբացառվի անկարողություններ չունեցող երեխաների ընդհանուր կրթական ծրագրերից. 5) **IEP**-ի նախատեսվող ամսաթիվը և ակնկալվող տևողությունը ծրագրերի ծառայությունների համար, հաճախականությունը և վայրը (6) համապատասխան առարկայական չափանիշները, գնահատման ընթացակարգերը և ժամանակացույցը՝ առնվազն տարեկան հիմունքներով, որոշելու, թե արդյոք երեխան հասնում է իր նպատակներին:

***Նվազագույն սահմանափակումային միջավայր.*** («LRE»). Առավելագույն չափով, անկարողություն ունեցող երեխաներին հնարավորություն է տրվում կրթվել անկարողություններ չունեցող երեխաների հետ, իսկ հատուկ դասընթացները առանձին դպրոցներում կամ բացառումը ընդհանուր ուսումնական ծրագրից, կլինի այն պարագայում, երբ երեխայի անկարողության բնույթը ու խստությունը այնպիսին է, որ լրացուցիչ օժանդակ միջոցները ու ծառայությունները սովորական դասարաններում բավարար կամ մատչելի չեն նրա համար:

***Տեղական կրթական գործակալություն («LEA»-Local Educational Agency).*** Այս տերմինը ներառում է՝ Դպրոցական կրթաշրջանը, Շրջանային կրթության գրասենյակը ("COE"), Հատուկ կրթության տեղական ծրագրի տարածքը («SELPA») կամ SELPA-ի անդամ հանդիսացող կանոնադրական (charter) դպրոցը:

***Ծանուցում Մեծամասնության իրավունքների մասին***. Ձեր երեխան իրավունք ունի իր կրթական ծրագրի մասին բոլոր տեղեկությունները ստանալ և կատարել բոլոր որոշումները, երբ նա տասնութ տարեկան դառնա, և եթե ըստ պետական օրենքի և ընթացակարգերի սահմանափակ հասկացություն ունեցող անձ չի դասակարգվել: Խնամատար չունեցող չափահասները ենթարկվում են Կալիֆորնիայի նահանգի օրենքի համապատասխան իրավունքին:

***Ծնողը***. Ծնողի սահմանումը ներառում է. 1) երեխայի համար իրավազորություն ունեցող անձ, 2) չափահաս աշակերտ, որի համար խնամակալ կամ կոնսերվատոր չի նշանակված. 3) այն անձը, որը հանդես է գալիս բնական կամ որդեգրող ծնողի՝ այդ թվում նաև տատիկի/պապիկի, խորթ ծնողի կամ այլ ազգականի դերում, որի հետ ապրում է երեխան. 4) փոխնակ ծնողը կամ 5) խնամատար ծնողը, եթե երեխայի ուսումնական որոշումներ կայացնելու համար հարազատ ծնողի իրավասությունը սահմանափակվել է դատական կարգով:

### *Ե՞րբ կարող եմ տեսնել ուսումնական գրառումներ, և ինչպե՞ս կարող եմ դա անել*

Կալիֆորնիայի հանրային դպրոցներում ընդգրկված երեխաների բոլոր ծնողները կամ խնամակալները իրավունք ունեն ստուգել ուսումնական գրառումներ, համաձայն Ընտանեկան կրթական իրավունքների և գաղտնիության մասին օրենքի ("FERPA") և Կալիֆորնիայի կրթական օրենսգրքի հոդվածի:

Ուսումական գրառումներն այն գրառումներն են, որոնք անմիջականորեն կապված են ձեր երեխայի հետ և պահվում են կրթաշրջանի դպրոցի, գործակալության կամ հաստատության կողմից, որոնք հավաքում, պահպանում կամ կիրառում են բնորոշ անձնական տեղեկություններ կամ տեղեկությունների ձեռքբերումներ: Դաշնային և պետական օրենքները ևս կսահմանեն կրթական գրառումները, որպես հետագա տեղեկատվության անմիջական նյութ՝ կապված ճանաչված տվյալ աշակերտին, այլ տեղեկատուի տեղեկությունների, որը պահպանվել է դպրոցի LEA-ի կողմից կամ պահանջվում է պահպանել աշխատակցի կողմից, իր պարտականությունները կատարելիս. արձանագրված ձեռագիր, տպագիր, ժապավեններ, ֆիլմ, միկրոֆիլմ, համակարգչային կամ այլ միջոցներ: Կրթական գրառումները չեն ներառում ոչ ֆորմալ անձնական գրառումները, որոնք պատրաստվել են և պահվում են դպրոցի աշխատակցի կողմից, սեփական կամ փոխարինողի օգտագործման համար: Եթե գրառումները պարունակում են մեկից ավելի երեխաների տեղեկատվություններ, դուք մուտք եք գործում միայն ձեր երեխայի վերաբերյալ գրառման բաժնը:

Անհատական տեղեկությունները կարող են ներառել. 1) երեխայի անունը, երեխայի ծնողի կամ ընտանիքի մյուս անդամի անունները. 2) երեխայի հասցեն. 3) անձնական ինքնության՝ ինչպիսին երեխայի սոցիալական ապահովության համարն է, ուսանողական համարը կամ դատական ֆայլի համարը. 4) անհատական հատկանիշների կամ այլ տեղեկությունների ցանկը, որը հնարավորություն կտա բացահայտել երեխային խելամիտ հստակությամբ:

Բացի այդ, հաշմանդամ երեխայի ծնողները իրավունք ունեն՝(1) ստուգել և վերանայել երեխայի բոլոր ուսումնական փաստաթղթերը՝ բացահայտման, գնահատման, ուսումնական տեղավորման և երեխային FAPE տրամադրելու վերաբերյալ. (2) LEA-ից ողջամիտ պահանջ է ստանում՝ արձանագրության, գրառումների, բացատրությունների և մեկնաբանությունների համար: Ծնողը, նաև, իրավունք ունի իր ներկայացուցչի հետ ստուգել և վերանայել երեխայի գրառումները, համաձայն FERPA-ի պահանջների: LEA-ն կարող է ենթադրել, որ ծնողը իրավասու է ստուգելու և վերանայելու իր երեխայի վերաբերյալ գրառումները, եթե այլապես LEA-ին չի տեղեկացվել, որ նահանգային օրենքով (որոնք կարգավորում են խնամակալությունը, բաժանումը, ամուսնալուծությունը և այլն) ծնողը չունի այնպիսի իրավունք, ըստ տվյալ նահանգի՝ խնամակալի, առանձնության կամ բաժանության օրենքի: Այս իրավունքները փոխանցվում են խնամակալության

տակ չեղող աշակերտին, որը տասնութ տարեկան է, կամ միջնակարգ կրթությունն ավարտել է հաճախում է մի հաստատություն:

Յուրաքանչյուր դպրոցում, գրառումների պահառությամբ զբաղվում է դպրոցի տնօրենը: Գրառումների պահառության փաստաթղթի վերջին էջում նշված է կրթշրջանի պահառուների ցանկը: Ուսումնական գրառումները կարող են պահվել դպրոցի կայքում կամ կրթաշրջանի գրասենյակում, սակայն ցանկացած գրավոր դիմում՝ գրառումների համար, կդիտվի որպես բոլոր գրառումների պահանջ: Գրառումների պահառության պատասխանատուն ձեզ կտրամադրի աշակերտի գրառումների տեսակները և վայրը (եթե պահանջվում է): Ծրագիրից դուրս գալուց երեք տարի հետո աշակերտի հատուկ ուսուցման գրառումները կոչնչացվեն:

Յուրաքանչյուր LEA պետք է պաշտպանի հավաքման համար պահանջվող անձնական տեղեկությությունների գաղտնիություն՝ բացահայտում, անձնական տվյալների պահպանման և ոչնչացման փուլ: Յուրաքանչյուր LEA-ի մեկ պաշտոնյա պարտավոր է պատասխանատվություն ստանձնել ցանկացած անձնական տեղեկությունների գաղտնիության ապահովման համար: Անհատական տեղեկատվություններ հավաքող կամ օգտագործող բոլոր անձինք պետք է վերապատրաստվեն կամ սովորեն IDEA-ի և FERPA-ի նահանգային օրենքների ընթացակարգերը: Հանրային ստուգման համար, յուրաքանչյուր LEA պարտավոր է՝ պահպանել ներկա աշխատողների անունները, պաշտոնը, որոնք անձնական տեղեկությունների իմացություն իրավունք ունեն:

Գրառումների պահառությունը, ձեր երեխայի ուսումնական գրառումների մատչելիությունը կսահմանափակի կրթական գրառումները վերանայելու իրավասություն ունեցող անձանց, ներառյալ ձեզ և առնվազն տասնվեց տարեկան ձեր երեխային կամ 10-րդ դասարանն ավարտած անձին, ովքեր ձեր կողմից լիազորված են եղել ստուգելու գրառումներ, դպրոցի աշխատողներին, որոնք գրառումներ տեսնելու օրինական և կրթական հետաքրքրություն ունեն, ձեր երեխայի համար նշանակված հետդարձային հաստատությունները և դաշնային, նահանգային ու տեղական կրթական գործակալությունների աշխատակիցները: Բոլոր մյուս դեպքերում, մուտքի թույլտվությունը մերժվում է, բացառությամբ՝ ձեր գրավոր համաձայնությամբ գրառումների կամ գրառումների ազատման համար թույտվությունը դատական կարգով կամ այլ կիրառելի օրենքով է: LEA- ն պետք է պահի այն տեղեկամատյանը, որը ցույց է կտա այն անձանց անուններ և նպատակը, որոնց մատչելի են գրառումները, բացի դպրոցական շրջանի աշխատակիցների և ծնողների:

Ծնողի համաձայնությունը չի պահանջվի, քանի դեռ անձի հաստատված տեղեկատվության արձակումը տրամադրվում է մասնակից մարմինների պաշտոնատար անձանց՝ IDEA-ի պահանջը բավարարելու նպատակով, բացառությամբ հետևյալ հանգամանքների. 1) նախքան տեղեկատվության տրամադրվում անցումային գործակալության կամ վճարվող մասնակից կազմակերպությունների պաշտոնատար անձանց՝ ծառայությունների համար և (2) եթե երեխան գտնվում է կամ պատրաստվում է գնալ այն մասնավոր դպրոցում, որը չի գտնվում է նույն դպրոցական շրջանում, որտեղ ծնողները բնակվում են, ծնողներից համաձայնությունը պետք է վերցվի նախքան երեխայի տեղեկությունները արձակվի ցանկացած դպրոցական կրթաշրջանի պաշտոնյաներին, որտեղ գտնվում է մասնավոր դպրոցը և կրթաշրջանի պաշտոնատար անձանց, որտեղ ծնողները բնակավայրն է:

Կրթական գրառումների վերանայումը և (կամ) օրինակները կտրամադրվեն պահանջի ստացումից հետո՝ հինգ (5) աշխատանքային օրերի ընթացքում: Պատճենների համար գանձվող գումարը, (ոչ որոնման և ստացման արժեքը) որոշվում է LEA-ի օրենքով և կգանձվի ձեզանից, եթե իհարկե երեխայի կրթական գրառումների մատչելիությունն չմերժվի ձեզ: Գրառումների ամբողջական պատճենը տրվելուց հետո, նույն գրառումների լրացուցիչ օրինակների համար կգանձվի:

LEA-ն պարտավոր է յուրաքանչյուր երեխայի համար մշտական գրառումների պատմություն պահել, որը ներառում է. 1) երեխայի անունը, հասցեն և հեռախոսահամարը, նաև՝ (2) երեխայի գնահատականները, հաճախումներ ցանկը, ներկա դասերը, ավարտած դասարանի մակարդակը և ավարտած տարեթիվը:

Եթե դուք հավատում եք, որ LEA-ի հավաքագրված, պահպանված կամ օգտագործված կրթական գրառումների տեղեկությունը սխալ է, մոլորեցնող կամ խախտում է երեխայի գաղտնիությունը կամ այլ իրավունքները, կարող եք գրավոր խնդրագիր ներկայացնել, որ LEA-ն ուղղի տեղեկատվությունը: Եթե LEA-ն համաձայն է ձեր խնդրանքին, ապա գրառումը կփոխվի և խնդրանքը ստանալուց հետո ողջամիտ ժամկետում կտեղեկացնի ձեզ:

Եթե LEA-ն հրաժարվում է 30 օրվա ընթացքում կատարել պահանջը, LEA-ն կտեղեկացնի ձեզ լսումների իրավունքի մասին, որոշելու, թե արդյոք վիճարկվող տեղեկատվությունը սխալ է մոլորեցնող կամ այլ կերպ խախտում է ձեր երեխայի գաղտնիությունը կամ այլ իրավունքները: Եթե դուք խնդրեք, որ LEA-ն դատական լսում անցկացնի ապա LEA-ն ողջամիտ ժամկետում լսում կնշանակի, որը պետք է իրականացվի FERPA-ի նմանատիպ լսումների ընթացակարգի համաձայն:

Եթե ղեկավարը խորհուրդի որոշում կայացնի, որ փաստաթուղթը չի փոփոխվի, դուք իրավունք ունեք տրամադրել այն, ինչին հավատում եք ուղղիչ գրավոր հայտարարությամբ, որը մշտապես կկցվի վիճարկվող գրառումներին: Այս հայտարարությունը կկցվի, եթե վիճարկվող արձանագրության փաստաթուղթը ներկայացվի ցանկացած կողմի:

***Իրավունք ունե՞մ IEP ժողովը ձայնագրել:***

Ծնողները, խնամակալը կամ LEA-ն իրավունք ունեն ձայնագրել IEP-ի ժողովի քննարկումները: Առնվազն 24 ժամ առաջ IEP-ի թիմին պետք է տեղեկացվի IEP-ի գրանցման ցանկության մասին: Եթե աուդիո ձայնագրելու մտադրությունը նախաձեռնվում է LEA--ի կողմից և ծնողը ձայնագրության պատճառով մերժում է կամ հրաժարվում է մասնակցել IEP-ի ժողովին, ժողովի քննարկումները չեն ձայնագրվի: Ծնողները իրավունք ունեն ստուգել, վերանայել և երբեմն փոփոխել ձայնագրությունը:

***Ի՞նչ է և ինչպե՞ս կարող եմ ձեռք բերել անկախ կրթական գնահատում:***

Անկախ կրթական գնահատում («IEE») կատարվում է որակյալ մասնագետի կողմից, որը չի աշխատում LEA-ի համար և չի ուսուցանում ձեր երեխային, սակայն բավարարում է Կալիֆորնիայի կրթական վարչության (California Department of Education) և LEA-ի պահանջները: Եթե դուք համաձայն չեք LEA-ի անցկացրած վերջին գնահատման արդյունքների հետ և LEA-ի հայտնի դարձնեք ձեր անհամաձայնությունը, ապա իրավունք ունեք պահանջել, և հնարավոր է, որ հասարակական ծախսով, որակավորված անձից IEE ստանաք ձեր երեխայի համար:

Եթե դուք դիմում եք հասարակական ծախսով IEE-ի ստանալու, ապա LEA-ն <u>պետք է</u>՝ (1) պատշաճ ընթացակարգ բողոք ներկայացնի ձեր դեմ վստահացնելու, որ անցկացված գնահատում համապատասխանում է կամ (2) վստահեցնի, որ IEE-ին հանրային ծախսով է ձեզ տրամադրել, եթե իհարկե LEA-ին ցույցադրի, որ լսումների գործընթացը՝ ձեռք բերված IEE-ի միջոցով, չի բավարարում LEA-ի չափանիշներին: Եթե LEA-ն ապացուցում է, որ լսումների պատշաճ գործընթացը և գնահատումը պատշաճ է, դուք դեռևս իրավունք ունեք IEE-ի, բայց ոչ հասարակական ծախսով:

Հասարակական ծախս նշանակում է, որ պետական հիմնարկը կամ վճարում է գնահատման ամբողջ արժեքը կամ ապահովում է, որ գնահատումը այլ կերպ անվճար տրամադրվի է ձեզ: Ձեր LEA-ն տեղեկատվություն ունի, թե որտեղ կարելի է ձեռք բերել նման IEE և LEA-ի չափորոշիչներով

IEE-ի , որոնք պետք է տրամադրվեն ձեզ IEE-ի խնդրանքով: Դուք կարող եք իրավասու լինել միայն մեկ IEE-ի հանրային հաշվով, երբ LEA-ն իրականացնում է գնահատական, որի հետ համաձայն չեք:

Եթե դուք ձեր անձնական ծախսով գնահատում եք անցկացնում և գնահատման պատճենը տրամադրում եք LEA-ին, գնահատման արդյունքները պետք է դիտարկվի IEP-ի թիմի կողմից, ձեր երեխային FAPE տրամադրելու համար: Մասնավոր ֆինանսներով կատարված գնահատումը կարող է ներկայացվել ձեր երեխայի պատշաճ լսումների գործընթացում:

Եթե LEA-ն դիտարկում է ձեր երեխայի գնահատման ընթացքը կամ, եթե LEA-ի գնահատման ընթացակարգերը թույլատրում են դիտարկել աշակերտին դասարանում, ապա IEE-ի դիտարկող անհատին պետք է թույլատրվի դիտարկել երեխային դասարանում կամ կրթական միջավայրում, IEP թիմի առաջարկով:

Եթե ձեր նպատակը՝ ձեր երեխային հասարակական նպաստով ոչ հանրային դպրոց տեղավորելն է, ապա LEA-ն հնարավորություն կունենա դիտարկել առաջարկվող վայրը կամ աշակերտին առաջարկվող տեղավայրում, եթե միակողմանի որոշումով՝ ծնողի կամ խնամակալի, աշակերտն արդեն տեղադրվել է ոչ հանրային դպրոցում:

### *Ի՞նչ է նախօրոք գրավոր ծանուցումը և երբ կստանամ այն:*

LEA-ի պատասխանատվությունն է գրավոր ծանուցումով տեղեկացնել ձեր երեխայի համար առաջարկող կամ մերժվող՝ բացահայտման, գնահատման կամ կրթական տեղավորման և երեխայի անվճար հանրային կրթություն տրամադրելը: LEA-ն պետք է ողջամիտ ժամկետում գրավոր ծանուցի ծնողներին այս առաջարկը կամ մերժի այն: Այս ծանուցումը, եթե նախապես չի տրամադրվել ծնողներին, նույնպես տրամադրվելու է LEA-ի պատշաճ գործընթացի ունկդրման համար ծնողի խնդրանքի վերաբերյալ: Ծանուցումը պետք է գրված լինի հասկանալի լեզվով և տրամադրվի ձեր մայրենի լեզվով կամ հաղորդակցության այլ եղանակով, եթե դա հստակ չէ և անելն անհնար չէ: Եթե ձեր մայրենի լեզուն կամ հաղորդակցման եղանակը գրավոր չէ, ապա LEA-ն պետք է ապահովի, որ ծանուցումը բանավոր կամ այլ կերպ թարգմանվի, որը դուք հասկանում եք, և որ կա գրավոր ապացույց, որ այդ պահանջները բավարարվել են: Դուք կարող եք ընտրել այս ծանուցումը էլեկտրոնային փոստի հաղորդակցության միջոցով, եթե ձեր LEA-ն այս տարբերակը մատչելի է դարձնում:

Գրավոր ծանուցումը կներառի հետևյալը.

- LEA-ի կողմից առաջարկված կամ մերժված գործողությունների նկարագրությունը՝ պատճառաբանելով, թե ինչու է գործակալությունը առաջարկել կամ մերժել գործողությունը և այլ գործողությունների նկարագրությունը և ինչու են այդ տարբերակները մերժվել:
- Յուրաքանչյուր գնահատման ընթացակարգի նկարագրությունը, քննությունը, գրառումները կամ զեկույցը, որն օգտագործվում է որպես առաջարկ կամ մերժման հիմք:
- IEP թիմի կողմից դիտարկված այլ տարբերակների նկարագրությունը և այդ տարբերակների մերժման պատճառը:
- Այլ գործոնների նկարագրությունը, որոնք վերաբերում են LEA-ի առաջարկին կամ մերժմանը:
- Ծանուցում, որ ծնողները կարող իրենց օրինակները ստանան կամ օգնությունը՝ հասկանալու իրենց իրավունքները և ընթացակարգային երաշխիքները իրենց երեխայի բնակվայրի Հատուկ կրթության տնօրենից, SELPA-ի տնօրենից կամ CDE-ից՝ Սակրամենտո քաղաքում:

### *Ի՞նչ է ծնողական համաձայնությունը և ե՞րբ է այն պահանջվում:*

LEA-ն պետք է նախապես ծնողական համաձայնության մասին տեղեկացված լինի, ինչպես նկարագրված է վերևում, նախքան ձեր երեխայի համար հատուկ ուսուցում և կամ համապատասխան ծառայություններ տրամադրելը: LEA-ն պետք է ողջամիտ ջանքեր գործադրի ծնողից տեղեկացված համաձայնություն ձեռք բերելու համար, նախքան երեխայի նախնական գնահատումը կամ վերագնահատումը: Եթե հրաժարվում եք համաձայնություն տալ նախնական գնահատման կամ վերագնահատման հետ, ապա LEA-ն կարող է, բայց չի պահանջվում, որ օգտագործի պատշաճ գործընթացի ընթացակարգերը, գնահատման համար ձեր համաձայնությունը ստանալու համար:

Ձեր համաձայնությունը, նախնական <u>գնահատման</u> համար, չի նշանակում, որ համաձայնություն եք տալիս հատուկ կրթության տեղավորման և/կամ ծառայությունների համար: Նախնական գնահատման ավարտից հետո տեղի կունենա ժողով, տվյալների վերանայման և քննարկման համար: Եթե այս հանդիպման ընթացքում առաջարկվում է հատուկ կրթության տեղավորում և/կամ ծառայություններ, այդ ժամանակ թիմը պահանջում է ստանա ձեր համաձայնությունը՝ տեղավորման և/կամ ծառայությունների համար:

Եթե դուք հրաժարվում եք համաձայնվել նախնական IEP-ի տեղավորման և/կամ ծառայությունների առաջարկին, կամ, եթե չեք կարողանում պատասխանել նման ծառայությունների առաջարկին, LEA-ն <u>չի կարող</u> օգտագործել ստորև նկարագրված պատշաճ ընթացակարգերը, որպեսզի վիճարկի տեղավորման և/կամ ծառայությունների համար: Այնուամենայնիվ, եթե LEA-ն առաջարկում է նախնական տեղավորում և ծառայություններ, և եթե դուք համաձայն չեք տեղավորում և/կամ ծառայությունների հետ, LEA-ն չի համարվի պահանջը խախտող՝ FAPE-ի մատչելիություն տրամադրելի դարձնելու ձեր երեխայի համար: Նույնպես LEA-ից չի պահանջվի նշանակել IEP-ի թիմի ժողով կամ մշակել IEP, կամ IEP փաստաթուղթ մշակել, երբ նման համաձայնություն չի տրամադրվել LEA-ի պահանջից հետո:

Դպրոցի կրթաշրջանը, ձեր տեղեկացված համաձայնությունը կպահանջի նաև ձեր երեխայի բոլոր վերագնահատումները կատարելու համար և վերագնահատում չի կատարվի, եթե չպատասխանեք համաձայնության պահանջին:

Ծնողական համաձայնությունը չի պահանջվում առկա տվյալների վերանայման համար, համարելով այն գնահատման կամ ստուգման մի մաս, ինչպես նաև չի պահանջվում քննության կամ այլ գնահատում իրականացման համար, որը տրվում է բոլոր երեխաներին (եթե իհարկե համաձայնություն պահանջվի բոլոր երեխաների ծնողներից, նախքան քննությունը կամ գնահատումը:)

Եթե ձեր երեխան տնային ուսուցում է ստանում կամ ձեր սեփական վճարով մասնավոր դպրոցում է տեղավորվել և դուք չեք տալիս ձեր համաձայնությունը նախնական գնահատման կամ վերագնահատման խնդրանքին, ապա LEA-ն չի կարող օգտագործել պատշաճ գործի ընթացակարգեր և չեղարկել համաձայնության ստանալու պահանջը: Այդ դեպքում, LEA-ն պարտավորված չէ ձեր երեխային համարել ծառայություններ ստանալու իրավասու:

Դուք կարող եք գրավոր համաձայնություն ունենալ ձեր երեխայի IEP-ի որոշ բաղադրիչների ստացման և IEP-ի բաղադրիչները պետք է իրականացվեն LEA-ի կողմից: Եթե LEA-ն որոշում է, որ ձեր երեխայի IEP-ի մնացած բաղադրիչը (երը), որին դուք համաձայն չեք, անհրաժեշտ է երեխային FAPE- տրամադրելու, LEA-ն <u>պետք է</u> պատշաճ լսումների գործընթաց նախաձեռնի:

Ի վերջո, ձեր համաձայնությունը կարիքը չկա երեխայի վերագնահատման համար, եթե LEA-ն կարող է ցուցաբերել լսելու պատշաճ գործընթաց, որի համար ողջամիտ միջոցներ են ձեռնարկվել ձեր համաձայնությունը ստանալու և դուք չեք պատասխանել դրան:

*Թույլատրվու՞մ է ինձ փոխելու իմ միտքը և ետ վերցնելու համաձայնությունս:*

Եթե ցանկացած պահի, երեխայի ծնողը գրավոր խնդրանքով չեղյալ է համարում իր համաձայնությունը, հատուկ կրթության հետ կապված հարակից ծառայությունների մատուցման շարունակության համար, դպրոցի կրթաշրջանը կամ չարտեր դպրոցը՝

• Հնարավոր է չշարունակի երեխայի համար հատկացված հատուկ կրթության և համապատասխան ծառայությունների տրամադրումը, սակայն, պետք է նախապես գրավոր ծանուցումով տեղեկացնի նախքան հատուկ կրթության և համապատասխան ծառայությունների տրամադրման դադարեցումը:

• Հնարավոր է չօգտագործի միջնորդության ընթացակարգերը կամ պատշաճ ընթացակարգերը՝ համաձայնություն ձեռք բերելու կամ որոշում ընդունելու համար, որպեսզի ծառայությունները տրամադրվել երեխային,

• Չի կարող խախտող համարել FAPE-ը երեխային մատչելի դարձնելու պահանջի համար, որովհետև զլացել է երեխային հետագա հատուկ կրթություն և հարակից ծառայություններ ապահովելու պատճառով

• Չի պահանջվի ներգրավվել IEP-ի թիմի ժողովումը կամ IEP զարգացնել երեխայի հատուկ ուսուցման հարակից ծառայությունների հետագա տրամադրման համար:

Եթե ծնողը գրավոր համաձայնությամբ հրաժարվում է երեխայի հատուկ կրթության ծառայություններից, երբ երեխային նախապես հատուկ կրթություն և համապատասխան ծառայություններ է տրամադրվել, դպրոցի կրթաշրջանից կամ կանոնադրական դպրոցից չի պահանջվում փոփոխել երեխայի կրթական գրառումները՝ հեռացնելով երեխայի անդորրագրի ցանկացած հղում հատուկ կրթության և համապատասխան ծառայությունները՝ համաձայնությունը չեղյալ հայտարարելու պատճառով: Այս դրույթը կիրառվում է, երբ ծնողը հրաժարվում է բոլոր հատուկ կրթական ծառայություններից: Եթե ծնողը համաձայն չէ որոշ ծառայությունների հետ, բայց ոչ բոլորը, խնդիրները պետք է լուծվեն պատշաճ գործընթացի միջոցով:

*Եթե ես բողոք ունեմ իմ երեխայի կրթական ծրագրի մասին, ինչպե՞ս կարող եմ այն բարձրացնել:*

Երբ ձեր երեխայի կրթության մասին մտահոգություն ունեք, շատ կարևոր է, որ դիմեք ձեր երեխայի ուսուցչին կամ դպրոցի տնօրենին կամ կրթաշրջանի գերատեսչին, ձեր երեխայի և ձեր նկատած խնդիրների մասին խոսելու: Ձեր դպրոցի կրթաշրջանի կամ SELPA-ի աշխատակիցները կարող են պատասխանել ձեր երեխայի կրթության, ձեր իրավունքների և ընթացակարգերի երաշխիքի վերաբերյալ: Նաև, երբ մտահոգություն ունեք, հիշեք, որ այս ոչ պաշտոնական զրույցը հաճախ լուծում է խնդիրը և օգնում է պահպանել բաց հաղորդակցություն:

Եթե դպրոցը կամ կրթաշրջանը չեն կարողանում լուծել ձեզ հուզող խնդիրները, ձեզ խրախուսվում է լ որևէ հատուկ կրթության վեճը լուծել վեճերի լուծման այլ ձևեր օգտագործելով:

**Ֆութհիլ SELPA-ի շրջանակներում կարող եք պահանջել անկողմնակալ, 3-րդ կողմի միջնորդություն, որպեսզի նրանք կարողանան լուծել ծագած վեճերը: Խնդրում ենք դիմեք SELPA-ի գրասենյակ՝ 818-246-5378 հեռախոսահամարով:**

*Ո՞րն է համապատասխան բողոքարկումը և որն է բողոքարկման վերաբերյալ իմ իրավունքը:*

Համապատասխան բողոքները օրենսդրության խախտում է՝ IDEA-ի կամ Կալիֆորնիայի հատուկ կրթության օրենքով: Բողոքը պետք է. 1) լինի գրավոր. 2) պարունակի հայտարարություն, որ LEA-ն խախտել է օրենքը կամ կանոնակարգը՝ IDEA-ի կամ Կալիֆորնիայի կրթության օրենսգրքի բաժնի ներքո. 3) պարունակի փաստեր, որոնք հաստատում են փաստարկները. 4) պարունակի ստորագրության և հայցադիմողի կապի տվյալներ. և (5) եթե փաստարկում է խախտում միայնակ երեխայի դեմ, այն պետք է պարունակի ՝ ա) երեխայի անունը և հասցեն (կամ անօթևան երեխայի համար առկա կապի տվյալները). բ) երեխայի հաճախած դպրոցի անունը. գ) խնդրի բնույթի նկարագրությունը և խնդրին վերաբերող փաստերը. դ) առաջարկված լուծումը, որքանով այն հայտնի է:

**<u>Կրթաշրջան / LEA-ի մակարդակի բավարարման բողոք.</u>** Ֆութհիլ SELPA-ն խրախուսում է, հատուկ կրթության ոլորտի վերաբերյալ ձեր բողոքները, ապա այը ներկայացնել ուղղակիորեն ձեր LEA-ին, որպեսզի LEA-ն արագորեն անդրադառնա ձեր մտահոգություններին ոչ պաշտոնական և արդյունավետ եղանակով: LEA-ն ստեղծել է գաղտնի ընթացակարգեր այս բողոքները ներկայացնելու: Կհանդիպի ձեզ հետ, որպեսզի ժամանակին հետաքննեն ձեր բողոքը և փորձեն լուծել ձեր մտահոգությունը: Համապատասխան հարցերով զբաղող պատասխանատուն կօգնի ձեզ լուծել խտրականության ցանկացած բողոք, ընդդեմ՝ կրթաշրջանի, աշխատողների կամ գործակալությունների և ուսանողների: Համապատասխան պատասխանատու կարող է օգնել նաև ձեր բողոքը գրավոր ներկայացնելու և օրենքով պահանջվող տեղեկությունները տրամադրել ձեզ: Համապատասխան հարցերով զբաղվող պատասխանատուն ձեզ կուղղորդի այլ գործակալությունների, որոնք անհրաժեշտության դեպքում, պատասխանատու են բողոքների հետաքննություն և լուծումներ գտնելու համար:

**Նահանգային մակարդակի համապատասխան բողոք**. Որևէ անհատ կամ կազմակերպություն կարող է նաև բողոք ներկայացնել Կալիֆորնիայի կրթության նախարարությունը՝ (CDE) փաստարկելով, որ LEA-ն չի պահպանել նահանգային օրենքը կամ կանոնակարգերը: Համապատասխան բողոքարկման համար դուք կարող եք բողոք ներկայացնել հետևյալ հասցեով՝

**California Department of Education**

**Special Education Division**

**Procedural Safeguards Referral Service**

**1430 N Street, Suite 2401**

**Sacramento, CA 95814**

**Phone (800) 926-0648**

**FAX (916) 327-3704**

CDE-ի այս գրասենյակը, կարող է օգնել ձեզ պատրաստելու ձեր բողոքը՝ գրավոր և տրամադրելու օրենքով պահանջվող տեղեկությունները: Համապատասխան հարցերով զբաղվող պատասխանատուն ձեզ կուղղորդի այլ գործակալություններ, որոնք անհրաժեշտության դեպքում պատասխանատու են բողոքների ուսումնասիրության և լուծումներ գտնելու համար:

CDE-ին բողոք պետք է ներկայացնել **մեկ** տարվա ընթացքում, երբ տեղեկացել կամ հիմքեր եք ունեցել իմանալու փաստերը, որոնք հիմք են հանդիսացել բողոքարկման համար: <u>Միևնույն ժամանակ,</u> դուք պետք է բողոքի պատճենը ուղարկեք LEA-ին, տեղեկացնելու, որ դուք բողոք եք ներկայացրել CDE-ին:

Ձեր բողոքը ներկայացնելուց հետո, վաթսուն (60) օրվա ընթացքում CDE-ն՝ 1) անհրաժեշտության դեպքում, իրականացնվում է անկախ տեղական հետաքննություն. (2) հնարավորություն է տալիս

հայցադիմումի մեջ եղած մեղադրանքների վերաբերյալ բանավոր կամ գրավոր լրացուցիչ տեղություններ ներկայացնել. (3) LEA-ին հնարավորություն է տալիս պատասխանել բողոքին, նաև բողոքը լուծելու առաջարկ անել. (4) հնարավորություն է տալիս ձեզ և LEA-ին ինքնակամ պայմանավորվել միջնորդության դիմելու. 5) վերանայել բոլոր համապատասխան տեղեկատվությունը և ինքնուրույն որոշում կայացնել, թե արդյոք LEA-ն խախտում է IDEA և (կամ) հարակից նահանգային օրենսդրության պահանջը. և (6) գրավոր որոշում կայացնել ձեզ և LEA-ին, որը վերաբերում է հայցադիմումում ներկայացված յուրաքանչյուր մեղադրանք և պարունակում է փաստերի և եզրահանգումների եզրակացություններ և վերջնական որոշման պատճառները:

### *Ո՞րն է « միայն միջնորդություն » պահանջը, որը ներկայացվել է CDE- ին:*

Կալիֆորնիայում միջնորդություն պահանջելը  կամավոր է: Կարող եք պահանջել «միայն միջնորդություն» ժողով Վարչական լսումների գրասենյակի հետ: «Միայն միջնորդությունը» նշանակում է, որ դուք միջնորդություն եք հայցում ՝ առանց պատշաճ գործընթացի լսումներ պահանջելու: Միջնորդությունը, ոչ-թշնամական ձևով իրականացվող ոչ պաշտոնական գործընթաց է: Եթե միայն միջնորդություն խնդրեք, դուք և դպրոցի կրթաշրջանը կստանաք ծանուցում, որ միջնորդություն է նշանակվել: Ծանուցումը կներառի միջնորդության ժամանակը, ամսաթիվը և վայրը, ինչպես նաև անունը, հասցեն և հեռախոսահամարը գործին նշանակված բանիմաց և անաչառ միջնորդի:

Միջնորդությունը պետք է նշանակվի Վարչական լսումների գրասենյակի հայցադիմումը ստանալուց հետո, 15 օրվա ընթացքում: Փաստաբանները չեն կարող մասնակցել միայն միջնորդություն ժողովին: Այնուամենայնիվ, դուք կամ դպրոցի շրջանը կարող են ուղեկցվել և խորհուրդ ստանալ ոչ փաստաբան ներկայացուցիչներից: Ձեր և դպրոցական կրթաշրջանի արված հայտարարությունները գաղտնի են և չեն կարող օգտագործվել պատշաճ ընթացքի դատական լսումների կամ դատական գործողությունների արդյունքում: Միջնորդության ընթացքում ձեռք բերված ցանկացած համաձայնագիր պետք է լինի գրավոր և ստորագրվի բոլոր կողմերից:

«Միայն միջնորդություն» հայցերը պետք է ուղարկվեն ՝

**Office of Administrative Hearings ("OAH")**

**Attn: Special Education Division**

**2349 Gateway Oaks Drive, Suite 200**

**Sacramento, CA 95833-4231**

**Phone (916) 263-0880**

**FAX (916) 263-0890**

### *Ո՞րն է պատշաճ ընթացակարգի վերաբերյալ դատական հայցադիմումը, և որո՞նք են իմ իրավունքները:*

Պատշաճ ընթացքի մասին դատական նիստը պաշտոնական վարույթ է, որը վարում է վարչական իրավունքի դատավորը, որը նման է դատական գործի: Լսումը կարող է նախաձեռնվել ձեր կամ LEA-ի կողմից, )երբ տարաձայնություն կա որևէ առաջարկի շուրջ կամ ձեր երեխայի  գնահատումը կամ ուսումնական տեղավորում նախաձեռնելու կամ փոխելու մերժում կա՝ ձեր երեխային FAPE-ի տրամադրման կամ  ձեր երեխայի համապատասխան ծրագրի առկայության համար: Պատշաճ գործընթացի լսման համար պահանջը պետք է ուղարկվի հետևյալ հասցեով.

**Office of Administrative Hearings ("OAH")**

**Attn: Special Education Division**

**2349 Gateway Oaks Drive, Suite 200**

**Sacramento, CA 95833-4231**

**Phone (916) 263-0880**

**FAX (916) 263-0890**

Պատշաճ ընթացակարգի լսման հայցը պետք է ներկայացվի ***երկու*** տարվա ընթացքում, երբ դուք տեղեկացել կամ հիմք եք ունեցել այն փաստերի մասին, որոնք հիմք են հանդիսացել լսման հայցի համար: Այս ժամանակացույցը չի վերաբերում ձեզ, եթե ձեզ ավելի վաղ արգելել են պահանջել պատշաճ գործընթացի լսումներ, քանի որ LEA-ն՝ (1) սխալ մեկնաբանություն է ներկայացրել թե լուծել է ձեր խնդրանքի հիմքում դրված խնդիրը. կամ (2) ձեզանից պահված է պահել տված տեղեկությունները՝ կապված սույն ծանուցագրում պարունակվող տեղեկության: LEA-ն պետք է տեղեկացնի ձեզ տարածքում առկա ցանկացած անվճար կամ մատչելի իրավաբանական կամ այլ համապատասխան ծառայությունների մասին, եթե հայցում եք այդ տեղեկատվությունը, կամ, եթե դուք կամ LEA-ն ներկայացնում եք համապատասխան ընթացակարգի վերաբերյալ բողոք:

Պատշաճ ընթացակարգի լսումների ժամանակ ձեր բողոքարկման պահանջը **պետք է** պարունակի հետևյալ տեղեկությունները. 1) ձեր երեխայի անունը. (2) ձեր երեխայի հասցեն (կամ անօթևան երեխայի դեպքում՝ առկա կապի տեղեկությունները). 3) ձեր երեխայի հաճախած դպրոցի անունը. 4) խնդրին վերաբերող առաջարկվող նախաձեռնությանը կամ փոփոխության նկարագրությունը՝ ներառյալ խնդրի վերաբերյալ հատուկ փաստերը և (5) խնդրի լուծման առաջարկը այնքանով, որքանով այն հայտնի է ձեզ: Դուք պետք է LEA-ին տրամադրեք ձեր հայցի պատճենը պատշաճ ընթացակարգի համար! Դուք (կամ LEA-ն) չեք կարող եք պատշաճ ընթացակարգով դատական լսումներ ունենալ այնքան ժամանակ, մինչև պատշաճ գործընթացի լսման բողոքի վերը նկարագրված բոլոր տեղեկությունները ներկայացված չեն:,

